Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման Ծրագիր

Սկսած 2015թ., տարածքային զարգացման հիմնադրամն իրականացնում է ***Սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման*** Ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 42.93 ԱՄՆ դոլար է, որից 30 միլիոնը ՎԶՄԲ-ի վարկային միջոցներն են: ՍՆՏԶ Ծրագրի իրականացումը ևս հիմնվում է համայնքահեն մոտեցման սկզբունքի վրա, այսինքն համայնքները.

- որոշելու են իրենց առաջնահերթ կարիքները՝ մասնակցային գործընթացի միջոցով,
- մասնակի համաֆինանսավորելու են ընտրված միկրոծրագրերը (4-10 տոկոսի չափով),
- շահագործելու և պահպանելու են ենթակառուցվածքները միկրոծրագրերի ավարտից հետո:

<u>ՍՆՏԶ Ծրագիրն ունի 2 համայնքային բաղադրիչ.</u>

❖ **Բաղադրիչ 1 Աջակցություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների հզորացմանը տեղական մակարդակում.**

Այս բաղադրիչի ներքո հիմնադրամը ներդրումներ կկատարի առանձին համայնքների ենթակառուցվածքների զարգացման մեջ, իրականացնելով շուրջ 120 միկրոծրագրեր:

Բաղադրիչ 1-ի միկրոծրագրերի տեսականին հետևյալն է.

✓ **Սոցիալական ենթակառուցվածքների**՝ կրթական, առողջապահական, մշակութային, սոցիալական նշանակության, հաստատությունների կառուցում, վերակառուցում, վերանորոգում և գույքի տրամադրում.

✓ **Տնտեսական ենթակառուցվածքների**՝ խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի, համայնքային և միջհամայնքային ճանապարհների կառուցում, վերակառուցում, վերանորոգում.

✓ **Սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքների**՝ կոյուղու ցանցերի, հեղեղատարների, հանգստի գոտիների բարեկարգում, վերանորոգում:

❖ **Բաղադրիչ 2 Աջակցություն միջհամայնքային սոցիալական և տնտեսական զարգացման նախաձեռնություններին**

Այս բաղադրիչը միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նորարարական նախաձեռնությունների ֆինանսավորման շնորհիվ ուղղակիորեն կօժանդակի տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցման և ներդաշնակ տարածքային զարգացման խթանման 2012-2015թթ. Հայաստանի զարգացման ռազմավարությանը: Բաղադրիչ 2-ով իրականացվում են ենթածրագրեր, ներկայացված տվյալ տարածքի (խոշորացող համայնքների, միջհամայնքային միությունների և համայնքների խմբերի) կողմից կիրականացվեն մոտ

30 ենթածրագրեր: Ի լրումն միկրոծրագրերի տեսականիի, ենթածրագրերը կարող են ընդգրկել նաև՝

- ✓ **Տեղական նշանակության բիզնես ծրագրեր**
  - գյուղմթերքի պահպանում և վերամշակում
  - նոր տեխնոլոգիաների վրա հիմնված այգիներ, տնկարաններ, ջերմոցներ և այլն,
  - կաթի հավաքման կետեր և վերամշակման արտադրամասեր,
- ✓ **Տարածաշրջանային աշխատանքային շուկաների զարգացման ծրագրեր**
  - մասնագիտական վերապատրաստման և հմտությունների զարգացման կենտրոններ,
  - Բիզնես-ինկուբատորներ և այլն:

Ենթածրագրերի բաղադրիչները պետք է լինեն փոխկապակցված, միմյանց ուժեղացնող, միտված մեկ ընդհանուր նպատակի և նպաստեն տարածքի զարգացմանը, ներգրավելով տարածքում գործող ՀԿ-ների, ՁԼՄ-ների, մասնավոր հատվածը և այլ շահագրգիռ կողմերի:

! Հիմնադրամի միջոցները կուղղվեն միայն հանրօգուտ, կայուն հանրային ներդրում հանդիսացող ենթածրագրերը: Ոչ մի մասնավոր բիզնես չի ֆինանսավորվի, ոչ մի ներդրում չի արվի այն ենթակառուցվածքի մեջ, որը ապագայում կարող է մասնավորեցվել: